



05/12512-17
1/06.2/10451-17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1053

«23» 03 2017 թ.

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի N 318 -Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության
կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին
ենթակետով հաստատված հավելված 1-ի 16-րդ կետի 4-րդ, 22-րդ ենթակետերով և
20-րդ կետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի ստորաբաժանումների և կազմակերպությունների համակարգման իրավասությունները՝ (աշխատանքների բաշխումը) համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ

իրավիճակների նախարարության համակարգի ստորաբաժանումների և կազմակերպությունների համակարգման իրավասությունները (աշխատանքի բաշխումը) սահմանելու և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի N885-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N318-Ա հրամանը:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

A handwritten signature in black ink is written over a grey diamond-shaped stamp. Below the signature, the word "CoSign" is printed in a stylized font.

Դ. ՏՈՆՈՅԱՆ